

Կազմված է 17.07.2017թ.

Տպագրված է ընդամենը 2օրինակ

ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՍՊԻՏԱԿԻ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԽՈՒՄԲ»
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԻ
ԿՈՂՄԻՑ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ 19.05.2010թ.

»Գրանցման թիվ 211.171.05375

Վկայական 03Ա.088435 *

ՀՎՀՀ - 06943898

«17» հուլիսի 2017թ.

ՆԱԽԱԳԱՀ՝

ԱՇԽԵՆ ԹԵԼՍՄԻԻ ԲԱԲԱՅԱՆ



19.05.2010թ. գրանցված կանոնադրության թիվ 001-2
փոփոխությունը գրանցված է ՀՀ
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

«02» 08 2017թ.



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
(Նոր խմբագրություն)

2017թ.

1.1 «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) ոչ առևտրային կազմակերպություն է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա օրենքով սահմանված կարգով միավորվել են ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակության առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրագուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

1.2 «Սպիտակի Հելսինկյան խումբ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը քաղաքական նպատակներ չի հետապնդում, որևէ քաղաքական կուսակցության չի հարում:

1.3 Կազմակերպության լրիվ անվանումն է՝

Հայերեն՝ Սպիտակի Հելսինկյան խումբ իրավապաշտպան հասարակական

Կազմակերպություն, կրճատ անվանումն է «Սպիտակի Հելսինկյան» ԻՀԿ

Ռուսերեն՝ Хельсинкская Группа Спитак правозащитная общественная организация,

Короткое название Хельсинкская Группа Спитак ПОО

Անգլերեն՝ Spitak Helsinki Group human rights non -governmental organization, short name is Spitak Helsinki Group HR NGO

1.4 Կազմակերպությունը գործում է օրինականության, խտրականության բացառման, բարեխղճության, անդամների շահերի ընդհանրության, անդամության կամավորության, ինքնակառավարման, հաշվետվողականության սկզբունքներին համապատասխան:

1.5 Կազմակերպության գործունեությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ՀՀ-ի կողմից վավերացրած միջազգային պայմանագրերին, ինչպես նաև. սույն Կանոնադրությանը:

1.6 Կազմակերպությունը գործունեություն է ծավալում ՀՀ ողջ տարածքում: Այն համագործակցում է տեղական, հանրապետական, տարածաշրջանային և միջազգային հասարակական /ոչ կառավարական/, իրավապաշտպան, գիտահետազոտական կազմակերպությունների, պետական հաստատությունների, անհատների հետ:

1.7 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ ք. Սպիտակ, Շահումյան 5/7:

1.8 Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:

1.9 Կազմակերպությունը ունի կլոր կնիք, որի կենտրոնում գրված է «հասարակական կազմակերպություն» արտահայտությունը և կազմակերպության ՀՎՀՀ՝ հայերեն և անգլերեն լեզուներով, շրջանագիծը եզերվում է կազմակերպության հայերեն, ռուսերեն և անգլերեն լրիվ անվանումներով:

1.10 Կազմակերպությունն ունի խորհրդանիշ, որի վրա պատկերված են երեք մարդու կներ դեղին, մանուշակագույն և կանաչ գույներով, որոնց մեջտեղում գրված է կազմակերպության անգլերեն հապավումը՝ SHG:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են.

- Աջակցել ժողովրդավարական համակարգի ամրապնդմանը և քաղաքական հասարակության զարգացմանը
- Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը
- Իրավական գիտելիքների տարածումը
- Նպաստել հասարակության մեջ հանդուրժողականության սկզբունքների ձևավորմանը
- Աջակցել քաղաքացիական նախաձեռնություններին, նպաստել տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների հետ քաղաքացիական երկխոսությունների մեխանիզմների ձևավորմանը և կատարելագործմանը
- Աջակցել դատաիրավական համակարգի զարգացմանը

2.2 Առաջադրված նպատակները կազմակերպությունն իրականացնում է հանդիպումների, գիտաժողովների, այցելությունների, դասընթացների, հրապարակումների, մրցույթների, հետազոտությունների և թույլատրելի այլ նախաձեռնությունների ձևով:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.2 Կազմակերպությունն ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է օրենքով սահմանված պարտականություններ:

Կազմակերպությունն իրավասու է օրենքով սահմանված կարգով՝

- իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ,
- բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.
- ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից.
- ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.
- տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին.
- կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.
- օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.
- համագործակցելու այլ կազմակերպությունների այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.
- կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:
- Ինքնուրույն որոշել իր կազմակերպության կառուցվածքը
- Սահմանել իր խնդիրները, նպատակները և գործունեության ուղղությունները,
- Ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ հասարակական կազմակերպություններում, դատարանում, պետական տեղական ինքնակառավարման մարմիններում
- Օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ, վարձակալել կամ այլ պայմաններով, այդ թվում նաև անվճար օգտագործել անշարժ և շարժական գույք
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ

- Կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր, գործարքներ և համաձայնագրեր

3.3 Կազմակերպությունն իրավասու է իրականացնել իր կանոնադրությանը չհակասող, օրենքով չարգելված այլ գործունեություն:

Կազմակերպությունը պարտավոր է.

- վարել իր անդամների և կամավորների հաշվառումը.
- Հայաստանի Հանրապետության «հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի.
- պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել Գործակալությանը.
- «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.
- Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը.
- Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել Գործակալություն.
- իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը.
- կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:
- Օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում

- Ապահովել իր գույքի օգտագործման տարեկան հաշվետվության հրապարակայնությունը
- Իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության Ընդհանուր ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը, օրենքով սահմանված տեղեկատվություն և հաշվետվություն ներկայացնել պետական մարմիններին
- Առանց լիազորագրի կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում 14 օրացույցային օրվա ընթացքում պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) կազմակերպության գտնվելու վայրի նոր հասցեի մասին տեղեկությունները:

Անօրինական գործունեություն ծավալելու համար կազմակերպությունն ու նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

3.4 Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում կազմակերպության անդամների և կազմակերպության անդամները պատասխանատվություն չեն կրում կազմակերպության պարտավորությունների համար: